

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ
ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎԻ

ՕՐԱԿԱՐԳ

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՁեԿ. Համայնքի ղեկավար Ա. Պետրոսյան
Ժողովին մասնակցում էին 60 մարդ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի ղեկավար Ա. Պետրոսյանը ժողովի մասնակիցներին հակիրճ ներկայացրեց առաջիկայում կատարման ենթակա հրատապ լուծում պահանջող ծրագրերը:

Համայնքի ղեկավար Ա. Պետրոսյանը հարկ համարեց նշել, որ տարբեր օբյեկտիվ և սյուբեկտիվ պատճառներով մեծ է չմշակվող հողատարածքների տեսակարար կշիռը՝ շուրջ 90.0%, հանգամանք, որը խիստ մտահոգիչ է և միաժամանակ դժվարացնում է սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը: Համայնքի ղեկավարը նախ անդրադարձավ 2019 թվականի բյուջեի կատարման հիմնական ցուցանիշներին, որն ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ պատկերն է ներկայացնում:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Նախատեսված /հազ.դրամ/	Փաստացի /հազ.դրամ/	Կատարման %-ը
Ընդամենը սեփական եկամուտներ՝ որից	21030,0	20394,7	84,9
Հողի հարկ	3900,0	3120,2	80,0
Գույքահարկ	12100,0	10224,0	84,5
Տեղական վճարներ	6800,0	6638,5	97,6
Հողի վարձավճար	55,0	95,2	173,1
Տեղական տուրքեր	1165,0	305,3	26,2

Համայնքի ղեկավար Ա. Պետրոսյանը հակիրճ կերպով անդրադարձավ 2019 թվականի ընթացքում համայնքապետարանի կողմից իրականացրած հիմնական աշխատանքներին:

1. Համայնքի կենտրոնական 2 փողոցներում կատարվել է կապիտալ նորոգման աշխատանքներ և փոսալցվել է դեպի համայնք մուտք ապահովող գլխավոր ճանապարհը՝ շուրջ 3կմ, սղոցած ասֆալտով ամբողջովին հիմնանորոգվել է Շինարարների փողոցը 570գծմ երկարությամբ, Բարեկամության թաղամասի և 12-րդ փողոցի մի հատվածը:

2. Շարունակական ուշադրության կենտրոնում է մնում մանկապարտեզը, արվում է ամենը առավել բարեկեցիկ աշխատանքային պայմաններ և ուսումնական դասապրոցես ապահովելու համար՝ ձեռք է բերվել շուրջ 300.0 հազար ՀՀ դրամ արժողությամբ հեռուստացույց, փոշեկուլ, մսաղաց, իսկ երեխաների առօրյան ավելի հետաքրքիր և հագեցած դարձնելու համար ձեռք են բերվել դիդակտիկ և կառուցողական խաղեր, բակում տեղադրվել է երկու մանկական տաղավար և լողավազան: Բարեկարգվել է մանկապարտեզի բակը: Ի ուրախություն համայնքի ազգաբնակչության տարվել են համապատասխան նախապատրաստական աշխատանքներ 2020թ-ից մանկապարտեզում գործող խմբերի թիվն ավելացնել ևս մեկով՝ խմբերի թիվը հասցնելով 4-ի: Ձեռք է բերվել 3,0մլն դրամի կահույք և անհրաժեշտ այլ պարագաներ:
3. Մանկապարտեզի ավարտական և դպրոցի այբբենարանի հանդեսներին նվերներ են բաժանվել: Կարևորվել են գրեթե բոլոր տոները՝ կազմակերպվել են մասսայական միջոցառումներ և համերգային ծրագրեր: Ամանօրյա տոների առթիվ նվերներ են բաժանվել 1-3-րդ դասարանների աշակերտներին և մանկապարտեզի 3 խմբերի երեխաներին, իսկ ազատամարտիկների և հայոց բանակում զինվոր ունեցող ընտանիքներին ցուցաբերվել է 600,0 հազար դրամի նյութական աջակցություն: Ամանորի գիշերը համայնքապետարանի նախաձեռնությամբ համայնքի գյուղամիջյան հատվածում տեղի է ունեցել մեծ միջոցառում՝ ներկայությամբ 3 ձմեռ պապի և ծյունանուշերի, ովքեր ներկա գտնվող բոլոր երեխաներին թվով 350 նվերներ են բաժանել, իսկ միջոցառման ավարտին տեղի է ունեցել շքեղ հրավառություն:
4. Կարևորելով ժամանակակից տեխնոլոգիայի դերը դպրոցահասակ երեխաների կյանքում, համայնքապետարանը 300,0 հազար ՀՀ դրամ արժողությամբ պոռյեկտը է նվիրել դպրոցին:
5. Համայնքի բնակիչներին տրվող դրամական օգնությունները դարձել են առավել հասցեական՝ համայնքի բնակիչների մահվան դեպքում հայնքապետարանը փոխհատուցել է թաղման ծախսերի մի մասը, աջակցություն է ցուցաբերվել բուժման խնդիր ունեցող սակավ ապահովված սոցիալական խմբերի անդամներին:
6. Ավարտին է հասցվել համայնքի ամբողջական գիշերային լուսավորությունը, տեղադրվել է նորագույն լեդ լուսատուներ:
7. Համայնքում բացվել է Արմաթ ինժեներական լաբորատորիաների մասնաճյուղ՝ համայնքից ներառված 2 խմբավարներով, որտեղ Նորակերտ համայնքի և հարակից բնակավայրերի դպրոցականները անվճար ինժեներական գիտելիք և ծրագրավորման հիմունքներ են սովորում, ստանալով բացառիկ հնարավորություն մասնակցելու մասնագիտական, խրախուսական և անգամ գործարար միջոցառումների, ծանոթանալ ցանցի մյուս դպրոցականների հետ, համատեղ աշխատել և նորարարական գաղափարներ իրագործել:
8. Պետական աջակցության շրջանակներում սուբսիդավորված Նորակերտ համայնքի ջրատարի նորոգման աշխատանքները ավարտին է հասցվել:
9. Համայնքապետարանը մշտապես կարևորել է համայնքի մշակույթային կյանքը.

- հունիսի մեկին կազմակերպվել է երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված համերգ-միջոցառում, որի ավարտին ներկա գտնված բոլոր երեխաներին բաժանվել են նվերներ.
- կանանց մեկամսյակի առթիվ համայնքապետարանի, դպրոցի և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների կին աշխատակիցներին տրվել է Երևանի կամերային թատրոնի տոմսեր,
- բանակի օրվան նվիրված կազմակերպվել էր համերգային ծրագիր <<Մասունք>> ազգագրական երգի պարի համույթի մասնակցությամբ,
- կազմակերպվել է միջոցառումներ նաև Ապրիլյան քառօրյաին և մայիսյան եռատոնին նվիրված:

10. Ի ուրախություն համայնքի ազգաբնակչության այսօր արդեն կարող ենք հայտարարել, որ լուծվում է դպրոցի մարզադահլիճի կառուցման խնդիրը՝ նախագծային աշխատանքները արդեն ավարտված են և հույս կա, որ ընթացիկ տարում մենք կունենանք մարզադահլիճ իր բոլոր հարմարություններով:

11. Հիմնանորոգվել է Բարեկամության թաղամասի մեկ բազմաբնակարանային շենքի տանիք, ընթացիկ տարում կվերանորոգվի ևս մեկը, աշխատանքները կլինեն շարունակական:

Կարևորելով տարվա ընթացքում կատարած աշխատանքների մեծ ծավալը համայնքի ղեկավարը այնուամենայնիվ նշեց, որ համայնքում շատ են տարիներ շարունակ իրենց լուծմանն սպասող խնդիրները, դրանք են՝

- ներհամայնքային փողոցների օր առաջ բարեկարգման անհրաժեշտությունը,
- ոռոգման խիստ մաշված ջրագծերի վերանորոգումը,
- գերեզմանատան տարածքի ընդհանուր բարեկարգումը,
- համայնքում առկա բազմաբնակարան շենքերի տանիքների և շքամուտքերի հիմնանորոգումը:

Համայնքի ղեկավար Ա. Պետրոսյանը նշեց, որ իր հետագա աշխատանքային գործունեությունը շարունակելու է մնալ բաց և թափանցիկ, համայնքի յուրաքանչյուր բնակիչ գործող կայքի միջոցով հաղորդակից կարող է լինել կատարվող բոլոր իրադարձություններին:

Վերջում համայնքի ղեկավար Ա. Պետրոսյանը ժողովի մասնակիցներին հավաստիացրեց, որ այսուհետ ևս համայնքի ավագանու, համայնքապետարանի աշխատակազմի և անձամբ իր կողմից արվելու է հնարավոր ամեն բան համայնքի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները մշտապես ուշադրության կենտրոնում պահելու և հնարավորության սահմաններում լուծում տալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ



2020 թվական փետրվարի 3
գ. Նորակերպ